թաթարները խիստ գովում էին։ Նորանք նորան «թարբիալի» (կրթված) ածականն էին տալիս։ որովհետև տանուտիրոջ զինուորական ծառայութեան միջոցին։ քանի տարի նորա կինը խանի անկողնոյն ծառայութիւն էր արել...

Դրանից յայտնուեց։ որ Պարսկաստանի խորերը գնացող պահանորդական (караульный) զինուորների գեղեցիկ կանայքը տարվում են խանի տնական ծառայութեանը։

Երկիրը վաղուց է որ անտառներից զրկվել է. միայն փոքր Մասիսի հարաւային արևելեան կողմերումը տեղ տեղ հովանաւորուած են մացառներով։ իսկ գիւղերը մեծ մասամբ փշատի ծառերով։ որոնք հեռուից նորանց գոյութիւնն են յայտնում։

Ճանապարհների վերայ մի տեղեկութիւն տալու համար։ ես մի հետաքրքրական պատմութիւն կանեմ ձեզ։ Խալաջ գիւղից Մագու գնալիս հեռուից մի բազմութիւն էր երևում։ այդ թափորը երբեմն շարժվում։ երբեմն կանգնում։ դարձեալ շարժվում։ կրկին կանգնում էր։ Այս կողմերի ճանապարհները այնքան ամայի և երկիւղալի են։ որ նորա վերայ մարդիկների պատահելը չար նշան է։ Երկար ժամանակ դիտակով մտիկ տուի։ բայց չ'կարողացայ ոչինչ հասկանալ։ Ճշմարիտ է որ երևում էր մոտ հարիւր քառասուն հոգուց